Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

26.07.12. № 3/3.8-2/9772-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.07.2012թ. N 15/15.2/10283-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «2012 թվականի մարտի 23-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Երոսաղեմի Սուրբ Ղազար Օրդենը
Հայաստանում») ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Արմեն Շախնազարյան

034/19516-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15.10/12.9

« 25 » 07 2012 թ.

N 3/14116-5/5135-12

Ձեր 2012-07-24, 15/15.2/10283-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «2012 թվականի մարտի 23-ի N Մ-228-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման
նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ
դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

Միջազգային կապերի բաժին
հեռ. 563-791

040/19353-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

24.07/28.
ԱԱ/3-6/7879-12

10/7.9

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 23-ի թիվ 15/15.2/10283-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012
թվականի մարտի 23-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում
«Երուսաղեմի Բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական
հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

կադրող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

044/19244-12

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

— հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա

10/7.10


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ-
ԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈԳՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵ-
ԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԱՎՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-2/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-6/-12
եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Բանանց» ֆուտբոլային
ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մանկապատանեկան
ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցման և հագեցման» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշ-
մանը (2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-131-Ա որոշման խմբագրությամբ) կից ծրագիրը
շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Ուկրաինայի քաղաքացի Կարեն Հենրիկի Սանթրոսյանի կողմից
ձեռք բերված և «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության
հասցեով ուղարկված երկու «Hyundai Elantra 1.6L» մակնիշի ավտոմեքենայի (նույնականաց-
ման համարները՝ KMHDG41C4DU506857 և KMHDG41C5DU507774, 2012 թվականի արտա-
դրության, 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 2000 ԱՄՆ-ի դոլար):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:




«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական
 կազմակերպության նախագահ Ս. Բարսեղյանի կողմից
 28 հունիսի 2012թ.

«Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցման և հազեցման» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել ֆուտբոլի զարգացմանը Հայաստանում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտավոր այլ վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Կամո Հայրապետյան /անձ. նո.002961, ՈՂ, Կրասնոդարի մարզ, ք. Արմավիր /, Կարեն Սանթրոպյան /անձնագիր BH013832, Ուկրաինա, ք. Դոնեցկ, Վատուտինի պող, 3բ տուն, 54 բն./, Ալբերտ Եսայան /անձնագիր BB133377, Ուկրաինա, ք. Դոնեցկ /, Օսկոբոժյենկիա Դոնբասս պող., տուն 9, բն. 19/ Ֆերգենդ Վիկչասլան /անձնագիր TR-Y NO 751200, Թուրքիա, ք. Ստամբուլ, Բաշակ Շեհիրի տաղամաս, 4 մաս, 1-ին խումբ, տուն 8, բն. 26/ և այլ անհատ բարերարներ:
4.	Ծրագիրը կատարողը	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Ջիվանու 2, ՀՎՀՀ՝ 02565965)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության մարզադաշտ (քաղ. Երևան, Ջիվանու 2)՝ սպորտի բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	903000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ 2. 10/7. 10
7.	Բարեգործություն ստացողը	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիա
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2012 թվականի հունիսի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը 10

2

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Մանկապատանեկան կերամիկայի և սարքավորումների ներմուծում - (հուլիս - սեպտեմբեր) - 55000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 2. Լուսատեխնիկայի ներմուծում - (հուլիս - սեպտեմբեր) - 53000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 3. Էլեկտրոնային և գրասենյակային տեխնիկայի ներմուծում - (օգոստոս- հոկտեմբեր) - 75000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 4. Դաշտերի ռոգոման համակարգի համար տարանների /տանկերների/ ներմուծում - (2013 թիվ) - 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 5. Ակադեմիայի մասնաշենքի ճաշարանի սարքավորումների և սառնարանների ներմուծում - (օգոստոս - հոկտեմբեր) - 130000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 6. Կոշտ և փափուկ կահույքի ներմուծում (օգոստոս - հոկտեմբեր) - 350000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 7. Մարզադաշտի ռադիո-հարձակոսային ձայնային համակարգի ներմուծում - (օգոստոս - նոյեմբեր) - 20000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 8. Ավտոպարկի համալրում երեխաների և մարզիչների ապաստարկման համար - (ներմուծում) - 190000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մանկապատանեկան կերամիկայի և սարքավորումների ձեռքբերում (զուգա- րանակներ, լվացարաններ, ջրի խառնիչներ, ցեցուղիներ, ծորակներ, պահեստամասեր և այլ պարագաներ) - 55000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 2. Լուսատեխնիկայի ձեռքբերում մասնաշենքի լուսավորության համար (լուսամուկներ, ջահեր, լուսարձակներ, զազապարպման լամպեր իրենց հիմնամասերով, բռաներ և էլեկտրոտեխնիկական այլ պահեստամասեր) - 53000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 3. Նախատեսված է շատ մեծ տեսակների, մեկ սերվեր DELL կամ HP, 28 հատ համակարգիչ տարբեր պարամետրերով, 25 հատ համակարգիչ մեկ համակարգչային դասասենյակ հազեցներու համար, նույնպես 5 հատ, հետախոսի սարքեր 65 հատ, մինի սառնարաններ 25 հատ, կենցաղային սառնարաններ տարբեր ծավալների 14 հատ, 48 հատ տարբեր տրամաչափերի հեռուստացույցներ, երաժշտական կենտրոններ 3 հատ,



	4. 20 տ տնտեսության պոլիթիկային տարաներ 5 հատ - 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 5. Ֆուտբոլի ակադեմիայի ճաշարանի և խանութի համար ամբողջ հավաքածու (ներառյալ) ճաշարաններ, էլեկտրական սարքերի մեկ հատ, վարարաններ տարբեր չափերի 2 հատ, մեկ մշակման սարքեր, խմորի հոսեցման և մշակման սարքեր, սառնարաններ մեկ, կանաչեղենի, խմորեղենի և հեղուկների պահպանման համար, 2 հատ սառնարան-կամերա մեկը և մեկը երկար պահպանման համար, սառնարան ցուցաբերի, ակումետա տարբեր, 14 հատ սառնարան ցուցաբերի հեղուկների համար, դանակ, պատասխար, գրպա, ապակեղեն ու ամեններ տարբեր չափերի, պարզապահարաններ տարբեր չափերի, ճաշ պատրաստելու ամեններ տարբեր չափերի և այլն) - Բնականուր ամսում մեկ հերթափոխում 7 մարտի ապաստարանի համար ամբողջ խմորեղենի - 130000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 6. 15 հատ նախարարի փառնակ կառույցի հավաքածու, 20 հատ պատի պահպանման հավաքածու. երեխաների ննջարանների համար (ցածրերին համապատասխան տեղում հավաքվող), 150 հատ նստարան և աթոռ աշակերտական, 20 հավաքածու, գրասենյակային կառույցի, 200 հատ փառնակ աթոռ դահլիճի համար, 140 հատ մանկավարժականների համար, 25 հատ երաժշտական հավաքածու, գրասենյակներ, պրոններ, գրասենյակներ, գրասենյակներ, մեծադասական պահարաններ և այլն - 350000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 7. Հզոր ուժեղագույն, ռադիոկապիչներ, հաղորդակցիչներ և բարձրարժեքներ - 20000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ.
---	--

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր 12. Համագործակցությանը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ 13. Ծրագրի արդյունավետության մեխանիզմների նկարագրությունը	8. 2 հատ մինչև 30 տեղանոց ավտոբուսներ երեխաներին տեղափոխելու համար, երեք մարդաստոր ավտոմեքենա բարձրագույն խմորի և մանկապատանիների դպրոցի համար հրավիրված մարզիկներին տեղափոխելու համար - 190000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն: Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունների ծրագրերի կատարման ընթացքի և ավարտի մասին, հաշվետվությունների ներկայացումը բարեխղճորեն կատարված աշխատանքների ավարտի մասին:
---	--

21.10/2.10

Հարգանքով՝

 Կ. Դավթյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԻԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
 Հեռ. (+374 10) 59 53 05
 Ֆաքս (+374 10) 52 42 82

26.04.2012թ. № 3/3.8-2/9473-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.07.2012թ. N15/15.6/10282-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-289-Ա որոշման ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝



Արմեն Շահնազարյան

034/19514-12
 26.04.2012թ.

Կատարող՝ Մ. Հարությունյան
 Հեռ. 595-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆՔԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՆԱԽ/3-6/7878-12

24.07.2012թ.

21.10/7.10

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ա/թ. հուլիսի 23-ի թիվ 15/15.6/10282-12 գրությամբ կարծիքի ներկայացված
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2011 թվականի մայիսի 13-ի N Մ-289-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և
նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում «Բանանց» ֆուտբոլային
ակումբ» հասարակական կազմակերպություն հասցեով ստացված ավոմեքենաների
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չունենք:

Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

044/19245-12

24.07.2012թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

— հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

—Ա

21.10/3.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱ-
ԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12
եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան,
Աշտարակի խճուղի, «Հուլիսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հան-
րապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժո-
ղովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հուլիսի
ավան» ծրագրի մասին» N Մ-328 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի փետրե-
րի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ
և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2012
թվականի հուլիսի 2-ին կնքված՝ N 11.7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատես-
վում է բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 3085500 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՁԻ-10/8.1

0010, Երևան, Մեյիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

26.07.2012թ. № 3/3.8-1/9880-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.07.12թ. N 15/15.6/10297-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2001թ.
հոկտեմբերի 10-ի N Մ-328-Ա (<<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամ>>) որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<ԱՌԴԱ
կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլիջի>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում
ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով

Արմեն Շախնագարյան

034/19500-12
26.07.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՁԻ-10/8.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 46 05

№ 166/3-4/4881-12
24.07.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.07.2012թ. թիվ 15/15.8/10297-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության
կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի N Մ-328
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Դիակոնիա»
բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը բարեգործական որակելու
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ավագյան

044/19238-12
24.07.2012թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ հուլիսի 2012 թվականի N Մ -
քաղ. երևան

- Ա

Մ. 10/8.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N1)
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-
նանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/12 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված
պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրակա-
նացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի
23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237925) 2012 թվականի հունիսի 20-ին կնքված՝
N 12-17 ապրանքի մատակարարման պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված ապրանքների հանձնում,
տեղադրում ու կարգաբերում՝ 940000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՋՈՒԼԻԱՆՆԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04700102) 2012 թվականի հուլիսի 9-ին կնքված՝
N 010/2012 մատակարարման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
սույն պայմանագրի N1 հավելվածում նշված ապրանքների մատակարարումը՝ 4709100
դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Մ. 10/8.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

26.07.12թ. № 3/3.8-1/9755-12

Ձեռ. № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.07.12թ. N 15/15.8/10328-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա («Այբ» կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված
ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («ԹԱՍԿ» ՍՊԸ-ի և
«ՋՈՒԼԻԱՆՆԱ» ՍՊԸ-ի հետ, կնքված պայմանագրեր) հետ, հայտնում եմք, որ նշված
որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ
և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Արմեն Շահնազարյան

26.07.12թ.

№ 034/19480-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԻ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-10/8.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 46 05

27. 07. 12թ
№ 3-4/8003-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 24.07.2012թ. թիվ 15/15.8/10328-12 գրությանը կից ներկայացված

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (ՈՒ) («Այբ»
կրթական հիմնադրամ)» որոշման նախագիծը բարեգործական որակելու
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

27. 07. 12թ
№ 044/19551-12

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

Մ-10/8.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորա-
ցում» դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի հուլիսի 21-ի N ՄԲ/15-1/7171-12 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի
23-ի N 3/3.8-1/9612-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-4/7883-12 եզրակացու-
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջա-
կանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահա-
կան համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա և հունիսի 29-ի N Մ-468-Ա որոշումների
խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Ագաթա-77» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2012 թվականի հուլիսի 17-ին կնքված՝
N ՀՀ ԱՆ ԲԸԱՀԱՊՁԲ-12/12 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է գրասենյակային կահույքի ձեռքբերում՝ 959650 դրամի չափով՝ առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

11.10/8.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

23.07.12 № 3/38-1/9612-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.07.12թ. N 15/15.4/10218-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ապրիլի 30-ի
N Մ-282-Ա որոշմամբ (<<<< տուբերկույոգի դեմ պայքարի ազգային ծրագրի>>,
դրամաշնորհային ծրագիր) հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման
նախագծի (<<Ազաթա-77>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Արմեն Շահնազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

11.10/8.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 46 05

N 24/3-4/7883-12
24.07.12թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.07.2012թ. թիվ 15/15.8/10218-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական
համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-282-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» որոշման նախագիծի
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղալերյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

N 034/19111-12
23.07.12թ

N 044/19237-12
24.07.12թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա

21.10/8.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-451-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային
գրասենյակ» ՊՈԱԿ) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի հուլիսի հուլիսի 21-ի N 3/3.8-1/9575-12, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի
N ԴԴ/02.2/7320-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի հուլիսի 23-ի N ԱԱ/3-4/7790-12 եզրակա-
ցությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակ-
ցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-451-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504277) 2012 թվականի հուլիսի 17-ին կնքված
N ՏԱԳ-ՊԸԾԶԲ-12/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրա-
նոցային ծառայությունների մատուցում՝ 2700000 դրամի չափով՝ առանց ավելացված արժե-
քի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

21.10/8.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

21.07.12 № 3/3.8-1/9575-1

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.12թ. N 15/15.4/10119-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հունիսի 8-ի N
Մ-451-Ա որոշմամբ (<<<< տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ>> ՊՈԱԿ)
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Շիրակ>> ՍՊԸ-
ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Արմեն Շահնազարյան

N 034/189 64-12
21.07.12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

21.10/8.4

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

25.07.12 N 24/02.2/7320-12
Ձեր N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2012թ. N15/15.4/10119-12 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի N Մ-451-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ) Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՆԱԽԱՐԱՐ՝

Handwritten signature

Դ.ԴՈՒՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Ք.Ղոնյան
Առողջապահական ծրագրերի բաժնի
գլխավոր մասնագետ հեռ. 56-57-95

N020/19274-12
25.07.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 46 05

N 24/3-4/7790-12
23.07.12թ. 21.10/8.4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2012թ. թիվ 15/15.4/10119-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի N Մ-451-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Handwritten signature Ա. Ալավերդյան

Անուղակի հարկերի բաժին, հեռ.060-544652

044/19025-12
23.07.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

4-10/9.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Մալենադարան» հիմնադրամի տնօրենի
2012 թվականի հուլիսի 14-ի N 60 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան»
հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման նախագծում» ծրագրի մասին» N Մ-198-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «01 հուլիսի 2012 թ.» բառերը փոխարինել «31
մարտի 2013 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԾ

“ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ” ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Հյուսիսային պողոտա 10-2
Հեռ./Ֆաքս +374 10 500172 e-mail: tempo2006@yandex.ru

FUND “MATENADARAN”
10-2 North ave.
0010 Yerevan, Republic of Armenia
Tel/Fax +374 10 500172
e-mail: tempo2006@yandex.ru



ФОНД “МАТЕНАДАРАН”
Республика Армения
г. Ереван 0010, Северный просп. 10-2
Тел/Факс +374 10 500172
e-mail: tempo2006@yandex.ru

N. 60

4-10/9.1

Հայաստանի Հանրապետության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-198-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
ժամկետը երկարացնել:

Խնդրում ենք հաշվի առնել և որոշման մեջ կատարել համապատասխան
փոփոխություն:

Կից ներկայացնում ենք համաձայնագրի պատճենը:


Կանխավ շնորհակալ ենք

/ Տնօրեն



Հ. Չիբլյան

14 հուլիսի 2012 թ.





Հայնախազիծ

Հայաստան, 0025 Երևան, Չարենցի 1
Հեռ: +374(1) 57 58 95, Ֆաքս: +374(1) 57 65 71
Էլ. փոստ: info@armproject.am
www.armproject.am

Մ - 10/9.1

N°
" " 20

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.02.2012թ. կնքված N ՆՊ 001 – ՍՔ12 պայմանագրի

Հայոց ցեղասպանության թանգարանի վերակառուցման և ընդարձակման
նախագիծ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «Մատենադարան» հիմնադրամ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.02.2012թ. կնքված N ՆՊ 001 – ՍՔ12 պայմանագրի

Մ - 10/9.1
29 հունիսի 2012թ.

քերական

«Հայնախազիծ» ԲԲԸ, որը հետագայում անվանվում է ԿԱՏԱՐՈՂ, ի դեմս՝ տնօրեն Գրիգոր Ազիզյանի մի կողմից և «Մատենադարան» հիմնադրամը, որը հետագայում անվանվում է ՊԱՏՎԻՐԱՏՈՒ, ի դեմս՝ գործադիր տնօրեն Հովհաննես Չիթչյանի մյուս կողմից, այսուհետ միասին և առանձին Կողմ կամ Կողմեր կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.


1. Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև 20 փետրվարի 2012թ.-ին կնքված N ՆՊ 001 – ՍՔ12 պայմանագրի անբաժանելի մասը:

1.2 Համաձայնագրով Կողմերը համաձայնվում են.

1.2.1 20 փետրվարի 2012թ. կնքված N ՆՊ 001 – ՍՔ12 պայմանագրի Հավելված 2-ով սահմանված Օրացույցային ժամանակացույցը փոփոխվում է և խմբագրվում է հետևյալ կերպ՝

NN	Աշխատանքների և հիմնական փուլերի անվանումը	Կատարման ժամկետը	Փուլի արժեքը /դրամ/	%
	Հայոց ցեղասպանության թանգարանի վերակառուցման և ընդարձակման նախագիծ /առանց ԱԱՀ –ի/	սկիզբը՝ 20.02.2012 ավարտը՝ 31.03.2013	66 400 000	
	այդ թվում՝			
	-ճարտարապետաշինարարական մաս	սկիզբը՝ 20.02.2012 ավարտը՝ 16.07.2012	51 000 000	
	-ցուցադրության գեղարվեստական ձևավորում /ղիզայն/ I փուլ կոնցեպցիա և նախագիծ	սկիզբը՝ 20.02.2012 ավարտը՝ 16.07.2012	9 000 000	
	II փուլ մանրամասնեցման գծագրեր	սկիզբը՝ 17.07.2012 ավարտը՝ 31.03.2013	6 400 000	



Handwritten signature


2. Այլ դրույթներ

- 2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից:
- 2.2 Համաձայնագրով փոփոխության չենթարկված Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:
- 2.3 Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

ԿԱՏԱՐՈՂ

«Հայնախագիծ» ԲԲԸ


ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ 01503291
ԱԱՀ 433 01503291/1
Հ/Հ 247010003850
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ



ՊԱՏԿԻՐԱՏՈՒ

«Մատենադարան» հիմնադրամ

ՀՀ, ք. Երևան, 0010, Յուսիսային պող. 10/2
ՀՎՀՀ 02705657
Հ/Հ 1510004133600100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2012 թվականի N Մ- 198 - Ա
քաղ. երևան

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՀԱՅՈՑ ԳԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊՈԱԿ-Ի ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ (1-ԻՆ ՓՈՒԼ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-1/2257-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 2-ի N 02/1250-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 28-ի N ԱԱ/3-4/1639-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 66400000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման նախագծում» ծրագիրը (1-ին փուլ) (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2012 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N ՆՊՈՒ-ԱԲ/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային աշխատանքների իրականացում՝ 66400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Մատենադարան» հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության

Տեղ


ըստ հիմնական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել անհատի տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

16/01.18




ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Հայոց ցեղասպանության բանցարան- ինստիտուտ» ՊՈԱԿ վերականգնման և ընդարձակման նախագծային աշխատանքների ծրագիր (1-րդ փուլ)

1	Հրազդի նպատակը	«Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերականգնման և ընդարձակման նախագծային աշխատանքների իրականացում										
2	Հրազդի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսված են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից										
3	Բարեգործը	«Մատենադարան» հիմնադրամ (ք. Երևան, Յուսիֆյան պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՎՀ 02705657)										
4	Հրազդի կատարողը	«Մատենադարան» հիմնադրամ (ք. Երևան, Յուսիֆյան պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՎՀ 02705657)										
5	Հրազդի իրականացման վայրը և բնակավայրը	ՀՀ, ք. Երևան, 0028 Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտ» ՊՈԱԿ										
6	Հրազդի բյուջեն	66 400 000 / վաթսուցուց միլիոն չորս հարյուր հազար դրամ/										
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտ» ՊՈԱԿ										
8	Ծրագրի իրականացման տևողությունը	22.02.2012 թ. - 01.հունիսի 2012 թ.										
9	Միջոցառման նկարագրությունը և օգնությունը, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<table><tr><th colspan="2">ՄԵԽԱՏԱՄԱՔԻ ՄԱԿԱՆՈՒՄ</th></tr><tr><th>ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/</th><th>ԻՐԱՆԱՑՈՒՄ</th></tr><tr><td>66 400 000</td><td>1. Նախագծային աշխատանքներ և դիզայն (ցուցադրության գեղարվեստական մակրոսկոպ)</td></tr><tr><td>66 400 000</td><td>ԸՆԴԱՄԵՆԸ</td></tr></table>			ՄԵԽԱՏԱՄԱՔԻ ՄԱԿԱՆՈՒՄ		ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/	ԻՐԱՆԱՑՈՒՄ	66 400 000	1. Նախագծային աշխատանքներ և դիզայն (ցուցադրության գեղարվեստական մակրոսկոպ)	66 400 000	ԸՆԴԱՄԵՆԸ
ՄԵԽԱՏԱՄԱՔԻ ՄԱԿԱՆՈՒՄ												
ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/	ԻՐԱՆԱՑՈՒՄ											
66 400 000	1. Նախագծային աշխատանքներ և դիզայն (ցուցադրության գեղարվեստական մակրոսկոպ)											
66 400 000	ԸՆԴԱՄԵՆԸ											

✓

Հնդր բերվող/մերմուծվող/արտահանվող և ծառայությունների համադրում և լարագիծը, ծավալները և մասնատվող գինը	ԱՆՆԱՏԱՆՔԻ ԱՎԱՌՈՒՄ 1. Նախագծային աշխատանքներ և դիզայն (ցուցադրության գնդարկնառական ծավալորում)	ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/	ԻՐԱՎԱՆՑՆԵՐ
10	ԵՆՈՐԱՐԻ ԽՈՒՄԱՆԱՐԿԱՆ ԻՆՏ ԿԱՎԿԱԾ ԿԱԳՄԱՆԻՐԱՎԱԿԱՆ ԾԱԽԵՐԸ	66 400 000	«Յայնախադի» ԲԲԸ
11	ՃՐԱԳՐԻ ԽՈՒՄԱՆԱՐԿԱՆ ԻՆՏ ԿԱՎԿԱԾ ԿԱԳՄԱՆԻՐԱՎԱԿԱՆ ԾԱԽԵՐԸ	66 400 000	«Մառնեմարտան» Հիմնադրամ
12	ՀԱՄԱԳՐԾԱԿՈՒՄՈՒՆԸ ԱԲՏՈՒՄԱՆ ԿԱՎԱԿԱՆ, ՍԵՐԱԿԱՆ ԻՆ ԲՆԱԿԱՆԱԿԱՆ ԾԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ԱՂ ԿԱԳՄԱՆԻՐԱՎԱԿԱՆ ԾԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՆՏ		
13	ԾՐԱԳՐԻ ԱՐԴՈՒՄԱՆՈՒՄՈՒՆԸ ՈՂԱՏՈՒՄԱՆ ՎԵ ԽԱՄԱՆՈՒՄՈՒՆԸ ՈՂԱՏՈՒՄՈՒՆԸ		

Գլխ. հաշվապահ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

- Ա *20-10/9.2*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԹ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼՂ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ծաղկածորի ստեղծագործական տուն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03003504) 2012 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N WVA/CC/04/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 130 ուսուցիչների վերապատրաստում՝ 9160500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ጊዜያዊ ጥያቄ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի Ն Մ-
քաղ. Երևան

-u

d^1 , 10/9.3

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱԿԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴԻՄՍ»-Ի ՀԱՍՑԵՌՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N ԶԲ/ԱՆՍ-5/-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ծախսերի կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, **ո ղ ո ղ ու մ է .**


1. Բարեգործական դրակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գոյգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված խառը բեռի (290 տեղ, 12509 lbs ընդհանուր քաշով, 92350 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6545 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Լոռու, Սյունիքի, Շիրակի մարզպետներին:

Sp. Temp. - ?

Հայրեն Մայրերի՝ Բաշարթուրի բազմազգական ընտանիքների հինճարտաւոր աւումըով ԱՊ-ից «Հայկական Միացալ հինճարտաւոր» կողմից ուղարկված 280 տեղ, 12 508 LBS քաշով, 92 360 ԱՊՏ դոյար արծողութեան խնամակաւորահաւար 6545 ԱՊՏ ուղարկ երեւ ուսխոնուն օսմը.

[illegible]



ԼԻ. 10/9.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

« 25 » 07 2012 թ.

N 82/44-ԱԳ-
5236-12

Ձեր 2012-07-24, 15/15.1/10369-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/19352-12

Միջազգային կապերի բաժին
հեռ. 563-791



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԼԻ. 10/9.3

64/3-6/7950-12

26.07.12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 24-ի թիվ 15/15.1/10369-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՂԱԿԵՐԴՅԱՆ

044/19403-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

- Ա

Ճ. 10/9.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-518-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի
խմելու ջրի ավազանի և Շաքի համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագրի մասին»
N Մ-518-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «3584448 դրամ»
բառերը փոխարինել «2530111 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս
Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված
գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմ Պլաստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572315) 2012 թվականի հուլիսի 13-ին
կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/001 LOT2 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 2068500 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2) «Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի
13-ին կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-03 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 461611 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հուլիսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

- Ա

Ճ. 10/9.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-519-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ
ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքների
մշակույթի տան վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-519-Ա որոշման 1-ին և որոշմամբ
հաստատված ծրագրի 6-րդ կետերում «7025737 դրամ» բառերը փոխարինել «5288391 դրամ»
բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս
Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 13-ին
կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է շինանյութերի մատակարարում՝ 5288319 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Շ ՈՒ Մ

հուլիսի 2012 թվականի N Մ-

- Ա

11.10/9.6

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-520-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ
ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում» ծրագրի մասին» N Մ-520-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «983955 դրամ» բառերը փոխարինել «936136 դրամ» բառերով:

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված՝ N WVA/SIS ADP/CM-12/002 LOT1-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 939136 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե: